

կալին վերածելու համար՝ պէտք է առջինին թիւը մէկալին համեմատական թուին հետ բազմապատկել . զոր օրինակ թէ որ կ'ուզես իմանալ թէ հարիւրամասն ջերմաչափին 10 աստիճանը՝ Ռէոմիւրի ջերմաչափին որ աստիճանին կը պատասխանէ , պէտք է 10 թիւը բազմապատկես 0,8 թուով , որ կ'ըլլայ 8° : Իսկ Գարեն-հիթին որ աստիճանն ըլլալը կ'իմանաս՝ թէ որ նոյն 10 թիւը բազմապատկես աս թուով 1,8 + 32 , որ կ'ըլլայ 50° :

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Սրջիւններու Բնութիւնը :

Ըջիւն միաբանակեաց կենդանիներուն վրայ շատ զարմանալի դիտելու բաներ կան , որ մարդուս միտքը ըստուծոյ նախախնամութեանը վրայ հիացնելով՝ երկրէս երկինք կ'առաջնորդեն : Ըստ տեսակ կենդանիներէն մէկն է մըջիւնը , որ ոտուրնուս տակն է , բայց զինքը քննող միտքը անով մինչև երկինք կը վերանայ :

Ինչպէս պատմութեան գրքերուն կը թողունք աս կենդանուոյս վրայ ուսումնական խօսակցութիւնը . հոս կ'ուզենք մեր ընթերցողաց միտքը զուարճացնելով կը թե՛ Վտիսըն անուով անգղիացի երևելի մատենագրին օրագրէն առնելով երկու հատուած՝ որ աս կենդանուոյս վրայ գրած է իր աշխոյժ ու փիլիսոփայական ոճովը :

Իրաւ , հարիւր տարիէն աւելի է որ Վտիսըն աս հատուածները գրած է . բայց որովհետև դեռ մըջիւններուն մէջ նորասիրութեան ախտը մտած չէ , աս հատուածներուս մէջ գտնուած ճշմարտութիւնն ալ ան ատենէն մինչև հիմայ փոխուած չէ , և մըջիւնները՝ ինչպէս որ Վտիսընէն առաջ՝ Սողոմոնին ատենն ալ ծոյլ մարդկանց յանդիմանիչ էին , նոյնպէս մեր օրե-

րու ծուլերն ալ աս մանրիկ միջատներուն գործունէութենէն կը յանդիմանուին :

Սրիչ անգամ Վտիսընին վարքն ալ կը դնենք , որ իր օրագիրներովը Մագղիացւոց ազգը ազգ ըրաւ : Հիմա իր ոգելից հատուածները կարգանք :

Ա .

«Ընթաց շաբթուան տետրակին մէջ ըսի թէ խլուրդի բոյնն որ մըջիւն բնակելու ըլլայ , երկրիս ճիշդ օրինակ մը կ'ըլլայ , բնակիչներով լեցուն : Սվոր աս մանրիկ միջատներուն պատմութիւնը գիտէ՝ աս խօսքս իրեն կարգէ դուրս խօսք չերևար : Ընոր համար կ'ուզեմ աս հետաքրքրական նիւթիս վրայ գրած թղթի մը իմաստը ընթերցողաց առջևը դնել , ինչպէս Վաղղիոյ ճեմարանին կաճառորդները հըրատարակեցին , ու անգղիարէն թարգմանուեցաւ : Ըիտակը զուրցելով , կենացս մէջամեննին այնպիսի զուարճութիւն չեմ ունեցեր՝ ինչպէս որ աս պատմութեամբը զուարճացայ , որուն վրայ տարակուսելու պատճառ չկայ :

Վուրի սենեակս , որ երկայն ատեն պարապ էր մնացեր , պատուհանը սրնտուկ մը կար՝ երկու ոտք խորութիւն , հողով լեցուն , մէջը ծաղիկ տնկելու համար : Ըստ պզտիկ պարտէզիկը երկար ատեն երեսի վրայ մնացեր էր , անոր համար վրան հին տիղմ պատեր էր . պատուհանին վրայէն ու քովի պատերէն մէջը կտորուանք թափած ըլլալով , հողն ալ լաւ մը թըրած , բուրրը իրարու խառնուած՝ չոր ու անբեր գետին էր դարձեր : Տեղը դէպի հարաւ ըլլալուն՝ անձրև ու հով չէր զարներ հոն . մօտն ալ ցորեննոց մը կար . ուստի մըջիւններուն շատ զուարճալի տեղ մը եղեր էր : Հոն ասոնք իրեք բոյն շինած էին . 'ի հարկէ , վասն զի մարդիկ ալ պտղաբեր ու յարմար տեղուանք , աղբիւրներու ու գետերու քով կը շինեն քաղաքները :

Ուզելով քանի մը ծաղիկ տնկել, միտքս դրի որ ան սնտուկը բանի բերեմ. ուստի պարտեղէն կակաչ՝ մը հանեցի որ մէջը տնկեմ: Բայց մէյմը որ աչքս մըջիւններուն դարձուցի, ու տեսայ որ բիւր աշխատանքով վեր կ'ելլէին (որ մեռք բանի տեղ չենք դներ, բայց իրենք շատ մեծ բանի տեղ կը սեպեն), ինծի երեցաւ թէ աշխարհիս ամէն ծաղկընէն աւելի կ'արժէ զանոնք հետաքրքրելը: Մէկէն կակաչը մէկդի ձգեցի, որպէս զի քննեմ ու նորոգեմ ան պզտիկ հասարակապետութիւնը: Եւ միայն իրենց կը պակսէր. վասն զի իրենց արթնութեամբն ու բռնած կարգերովը շատ խելացի հասարակապետութիւններէ կատարեալ էր իրենցը. անոր համար ուրիշ բանէ չէին վախնար, հապա միայն որ չըլլայ թէ նոր օրէնսդիր մը ուզենայ իրենց կառավարութեան կերպը փոխել:

Եւ զբազանքս բոլորովին ան եղաւ որ իրենց ինչ պէտք է նէ հոգամ: Մտտուկէն ինչ որ իրենց նեղութիւն կուտար՝ սկսայ դուրս հանել. շատ անգամ ալ կ'երթայի կը տեսնէի իմ մըջիւններս, ու իրենց գործողութիւնները կը քննէի: Արովհետեւ սովորուի ունէի որ ուշ անկողին կը մտնէի, գիշերը կ'երթայի որ լուսնի լուսով իրենց աշխատիլը տեսնեմ. շատ անգամ անկողնէս ալ ելեր եմ որ երթամ տեսնեմ իրենց աշխատիլը: Միշտ տեսեր եմ որ սմանք վեր վար կ'երթային կուգային մեծ զբաղանքով. կրնայ մէկը ըսել թէ ոչ երբէք քուն կ'ըլլան: Եւ մէնքը գիտեն որ մըջիւնները ցորեկ ատեն իրենց ծակէն դուրս կ'ելլեն, ու արևուն կը փռեն ան ցորենն որ գիշերը հողին տակը կը պահեն: Ով որ մըջիւնի բոյն տեսեր է՝ դիւրաւ դիտած կ'ըլլայ իրենց բոյնին եզերքը ցորենի մանր դէզեր: Եւ ըլլի բերան էս ասոր զարմացայ որ իմ մըջիւններս գիշերը միայն դուրս կը հանէին ցո-

րենը, լուսնին ցաթած ատենը, ու ցորեկը հողին տակը կը պահէին, որ մէկալ տեսածներուս ներհակն է. ու հիմայ ալ կրնայիմ որ ուրիշ տեղուանք ալ անանկ կ'ընեն: Մէկէն աս բանիս պատճառը գտայ. աղաւնոց մը կար, որ ան տեղէն շատ հեռու չէր. թէ որ ցորեկը դուրս հանէին, աղաւնիներն ու թռչունները իրենց ցորենը կ'ուտէին: Եւ ատ հաւանական է որ աս բանս փորձով իմացած ըլլան. վասն զի էս ալ շատ անգամ առաւօտն որ կ'երթայի, հոն աղաւնիներ ու թռչուններ կը տեսնէի: Եւ ուտ մը աս աւազակներէն զիրենք՝ ազատեցի. թռչունները վախով փախուցի՝ չուանի մը ծայր քանի մը թղթի կտոր կակելով, ու պատուհանէն վար կախելով: Իսկ աղաւնիները շատ անգամ վաւերեցի. անանկ որ տեսան թէ հոն առջինէն աւելի մարդ կուգայ, մէյմ՝ ալ չհանդիպեցան: Բայց զարմանալին ան է (որ էս ալ չէի կրնար հաւտալ) որ քանի մը օրէն մըջիւններն իմացան թէ ալ վախի բան չկայ, սկսան իրենց ցորենը արևը փռել: Միայն թէ իմացայ էս որ բոլորովին վտանգէ ազատ ըլլալուն վրայ ասպահով չէին. վասն զի չհամարձակեցան բոլոր իրենց համբարը մէկէն դուրս հանելու, հապա քիչ քիչ. նախ քիչ մը, ու առանց կարգի մը, որպէս զի թէ որ դժբախտութիւն մը հանդիպի՝ շուտ մը կարենան նորէն ներս կրել. ուստի պահպանութիւն կ'ընէին ու չորս դին կը նայէին. բայց ետքը երբոր տեսան թէ վախնալու բան չկայ, կարգաւորեալ կերպով ամէն ցորենին դուրս կը հանէին՝ գրեթէ բոլոր ցորեկը, ու գիշերը ներս կը կրէին:

Եւ մէն մըջիւններու բոյնին մէջ գրեթէ կէս բթաչափ խորութեամբ շիտակ ծակ մը կայ. ետքը դար վար կ'երթայ մինչև ուր որ է իրենց համբարանոցը. որ կարծեմ իրենց հանգչելու ու կերակուր ուտելու տեղէն տարբեր տեղ է: Սասն զի ամենեւին

հաւատալու բան չէ որ մըջիւնը իր համբարանոցը լեցընէ, ու իր ցորենը աղտեղութիւնով խառնէ, ինքն որ մաքուր կենդանի է, ու կերած ցորենէն աւելցած ամէն մանրութեան բոյնէն դուրս կը թափէ, ինչպէս որ հազար անգամ դիտեր եմ:

Մըջիւններուն դիզած ցորենը հողուն տակը կրնար ծիւլ, թէ որ իրենք առաջուց հոգացած ու ասոր դէմն առած չըլլային: Վիզելէն առաջ կը խաճնեն ու դուրս կը ձգեն ցորեններուն բոլոր ծիւլերը, անոր համար մըջիւնին բոյնը դիզուած ցորենը ոչ երբէք կը բուսնի: Ով որ ուզէ դիւրաւ ասոր փորձը կրնայ ընել, ու յայտնի տեսնել որ մըջիւններուն ցորենին վըրայ ծիւլ չկայ:

Թէպէտ և ծիւլը ակռայով դուրս կը ձգեն, բայց ուրիշ դժուարութիւն մ'ալ կը մնայ, որ ցորենը հողուն տակը պէտք է որ ուռի ու փտտի. անով մըջիւններուն սննդեանը անպիտան կ'ըլլայ: Մըջիւնները իրենց աշխատութեամբը ու ճարտարութեամբը ասոր ալ դեղը գտեր են. կրնային որ ցորենը իրենց բոյնին մէջն ալ այնչափ չոր մնայ՝ որչափ որ չոր է մեր ցորեննոցներուն մէջ: Չոր հողը շատ մը մանր կտորուանք կը ժողվեն, ամէն որ իրենց ծակերէն դուրս կը հանեն, ու չորս դին կը շարեն որ արեւէն տաքնան: Ամէն մըջիւն իր ճանկովը մէյմէկ կտոր հող դուրս կը բերէ, ծակին քովը կը գնէ, ու նորէն կ'երթայ, ուրիշ կտոր մըն ալ կը բերէ: Այսանկով քառորդէ մը պակաս միջոցի մէջ կը տեսնես որ անհամար աս չոր հողին պղտիկ կտորուանքները կը դիզեն ծակին չորս դին: Այս բանը գրեթէ ամէն օր կ'ընեն արեւուն տաքութեանը ատեն. ու թէպէտ արեւը կէսօրուրնէ ետեւ իրեքին կամ չորսին պատուհանէն կ'երթար, բայց մըջիւնները քանի որ տաք էր՝ իրենց ցորենն ու հողի կտորուանքը չէին շարժեր, վասն զի գետինը սաստիկ տաք կը մնար:

Թէ որ մէկը ըսէ՝ թէ մըջիւնները

կրնային աւազ, կամ աղիւսի կամ քարի մանր կտորուանք գործածել՝ քան թէ աս չոր հողին պատճառաւ այնչափ աշխատիլ, պատասխան կուտամ թէ աս բանիս համար արեւուն մէջ տաքցած հողէն յարմար բան չկայ: Ցորենը աւազի վըրայ չպահուիր. ցորենն ալ կտրած ու ծիւլը հանած ըլլալով, աւազի մանրութիւնը կը լեցուէր, մաքրելն ալ դժար կ'ըլլար: Այս ալ կայ որ աւազին հատերը այնչափ մանր են, որ մըջիւնը ետեւէ ետեւ չէր կրնար կըրել. անոր համար է որ գետներուն քով կամ աւազոտ գետնի վըրայ մըջիւն շատ չգըտնուիր: Իսկ աղիւսի ու քարի մանր կտորուանքները թացութենէ կրնան իրարու հետ միանալ ու անով տեսակ մը կարծր քար դառնալ, որ մըջիւնները չեն կրնար կտոր կտոր ընել: Այս կտորուանքը իրարու հետ միանալով, բոյնէն դուրս հանելն ալ անկարելի կ'ըլլար, ու բոյնին չափակցութիւնը կը կորսնցընէր:

Այս հողի կտորուանքները դուրս բերելէն ետեւ, նոյն կերպով իրենց ցորենը դուրս կը հանեն, ու հողին չորս դին կը շարեն: Այսանկով մըջիւնի բոյնին եզերքը կը տեսնես որ երկու դէպ կայ. մէկը չոր հող, մէկալը ցորեն: Ետքը կը սկսին դուրս կրել մնացած չոր հողը, որ անտարակոյս անոր վըրայ դրած կ'ըլլան ցորեննին:

Մըջիւնները ոչ երբէք աս բանս կ'ընեն, մինչև որ օդը պայծառ, արեւն ալ խիստ տաք չըլլայ: Տեսայ որ օր մը կէսօրուրնէ ժամ մը առաջ ցորեննին դուրս բերին, ու սովորականէն դուրս՝ կէս օրը մէկ ժամ մը չանցած՝ ներս կրեցին: Այս բանիս պատճառը չիրցայ իմանալ. որովհետեւ արեւը տաք ու երկինքը պայծառ էր. բայց կէս ժամէն ետեւ սկսաւ երկինքն ամպոտիլ ու բարակ անձրեւ գալ: Մըջիւնները աս բանս առաջուց իմացեր էին: Ինչ հակառակն Միլանու օրացոյցը գուշակեր էր թէ նոյն օրը անձրեւ պիտի չգայ:

Առաջուց ըսի թէ աս մըջիւններն

որ վրանին ես աս մասնաւոր դիտողութիւնները կ'ընէի, ցորեննոցէն կը բերէին իրենց ցորենը . ես ալ շատ անգամ ցորեննոցը կ'երթայի : Նոն քիչ մը հին ցորեն ալ կար . և որովհետեւ ամէն հատիկները միակերպ չէին, տեսայ որ մըջիւնները աւելի լաւերը կ'ընտրէին :

Շատ փորձերով գիտեմ թէ մըջիւնները կընային որ եթէ ցորեն գտնեն՝ իրենց պաշարը անով հոգան, ու միշտ աւելի լաւը կ'ընտրեն . բայց առանց ցորենի ալ կընան իրենց պաշարը ճարել : (Թէ որ ցորեն չգտնեն, հաճար, վարսակ, կորեկ կը ժողվեն, մինչև հացի փշրանք ալ . բայց խիստ քիչ անգամ գարի, ան ալ մինչև որ սաստիկ նեղութեան ատեն չըլլայ, և ուրիշ բան չկարենան գտնել :

Ազգելով որ ասոնց նախատեսութիւնն ու ճարտարամտութիւնը լաւ մը իմանամ, իրենց բոյն շինած սենեկին անկիւնը քիչ մը ցորեն դիզեցի . ու որպէս զի ցորեննոցէն չկարենան առնել, պատուհանը փակեցի ու ամէն ծակերը փոցեցի : (Թէպէտ մըջիւնները շատգէտ ըլլան, բայց չեմ կարծեր որ կախարդ ալ ըլլան . ուստի չէին կընար գուշակել թէ ան խուցը ցորեն դրեր եմ : Վիտեցի որ քանի մը օր շատ շփոթութեան մէջ էին . ու իրենց պաշարը գտնելու համար երկայն ճամբայ կ'ընէին : Շուտով չէի ուզեր աշխատանքնին դիւրացընել . վասն զի կ'ուզէի իմանալ թէ արդեօք պիտի գտնեն գանձը, ու հեռուանց պիտի տեսնեն թէ չէ . և թէ արդեօք հոտառութիւն ունին որ անով իմանան՝ թէ որ բանը իրենց սննդեանը յարմար է : Բնականով քիչ մը ատեն շատ նեղութեան մէջ էին, ու շատ աշխատեցան : Նեռու տեղուանք կ'երթային կուգային, որ ցորենի հատեր գտնեն . երբեմն երկայն ու աշխատալի ճամբորդութենէ ետեւ ալ ցորենին չէին հաւնէր : Ինձի ան զարմանալի երևցաւ՝ որ մըջիւն մը չկար որ բոյնը դառնայ ու բան մը

չբերէ : Սէկը ցորենի հատիկ մը կը բերէր, մէկալը հաճար մը կամ վարսակ մը, կամ թէ որ ուրիշ բան մը չէր գտնէր՝ չոր հողի կտոր մը :

Ինչ պատուհանը որուն մէջ մըջիւնները բոյն շինէր էին՝ պարտեղի վրայ կընայէր, ու երկու յարկ բարձր էր : Սէջերնէն ոմանք պարտեղին աւելի հեռու անկիւնը կ'երթային, ոմանք մինչև հինգերորդ յարկը կ'ելլէին ցորենի հատ մը գտնելու համար : Իրենց համար շատ երկայն ճամբորդութիւն էր, մասնաւոր թէ որ մեծ կակ ցորենի հատով մ'ալ բոյներնին դառնալու ըլլային՝ որ մըջիւնի մը համար աղէկ ծանր բեռ է, որ անկէ աւելի բան չկընար կրել : Վարտեղին մէջտեղէն մինչև բոյնը բերելը չորս ժամ կը քշէր . ասկէ կընայ մարդ իմանալ աս պզտիկ միջատներուն ոյժն ու զարմանալի աշխատութիւնը : Բնակէ կ'երևնայ թէ մըջիւնն ալ այնչափ ուժով կ'աշխատի, ինչպէս որ մարդս կ'աշխատէր՝ թէ որ ամէն օր ծանր բեռ մը չորս մղոն տեղ տանելու ըլլար : Իրաւ է որ շիտակ գետնի վրայ մըջիւնները շատ չեն աշխատիր . բայց որչափ նեղութիւն կը քաշէ խեղճ կենդանին երբոր ցորենը երկրորդ յարկը կը տանի, գլուխը վար՝ կռնակը վեր բռնած պատէն վեր որ կ'ելլէ : Վարդ չկընար լաւ հասկընալ մինչև որ չտեսնէ իրենց ասանկ աշխատիլը : Իրենց յոգնելուն յայտնին շանն ան է որ յարմար տեղ մը որ գտնեն՝ շուտ շուտ կը կենան յոգնութիւն կ'առնեն : Սըջիւններ կ'ըլլային որ շուարած կը մնային, ու չէին կընար ճամբանին լմընցընել : Բնայիսի ատեն ուժով մըջիւններ, կամ անոնք որ դեռ չեն յոգնած, իրենց ցորենը բոյնը տանելէն ետեւ վար կ'իջնան որ անոնց օգնեն : Սմանք գրեթէ բոյնին մօտ հասած՝ թշուառաբար իրենց բեռովը պատէն վար կ'իջնային : Ինչ ատենն ալ քիչ կ'ըլլայ որ իրենց ցորենը կորսընցընեն . նորէն վեր կը կրեն :

Տեսայ որ պզտիկ մըջիւն մը ան .

հաւատալի աշխատութեամբ մեծ ցորեն մը կը տանէր . երբոր անտուկին հասաւ, որ բոյներնին հոն էր, այնչափ արտորալ սկսաւ՝ որ ան աշխատալի ճամբորդութենէն ետքը բեռովը վար ընկաւ : Այսպիսի դժբախտուի փիլիսոփայի մըն ալ հանդիպէր նէ՝ սիրտը կը նեղացնէր : Ար իջայ, տեսայ որ ան մըջիւնը ցորենը ճանկերովը բռներ է : Արէն վեր սկսաւ ելլել . իրեք անգամ նոյն դժբախտութիւնը հանդիպեցաւ : Այլաւ որ ճամբուն կէսէն ընկաւ, եղաւ ալ որ աւելի բարձրէն . բայց ոչ երբէք ունեցածը թողուց, և ոչ յուսահատեցաւ : Բայց վերջապէս ուժէ ընկաւ ու կեցաւ . ուրիշ մըջիւն մը եկաւ օգնեց իրեն որ բեռը տանի . բեռն ալ գեղեցիկ մեծկակ ցորեն մըն էր որ մըջիւն մը հազիւ կրնայ տանիլ : Ար հանդիպի որ պատէն վեր ելլելու ատեն ցորենը ճանկերնուն կը սահի կ'իյնայ . թէ որ գտնեն՝ կ'երթան նորէն կ'առնեն, չէ նէ ուրիշ մը կը փնտռեն, և կամ ուրիշ բան մը կ'առնեն . վասն զի կ'ամբնան պարապ ձեռքով բոյնը դառնալու : Ար բանս փորձեր եմ, ու գտած ցորեննին մէկ դի եմ առեր : Այլ որ մէկը բաւական համբերութիւն ունենայ, բոլոր աս փորձերը դիւրաւ ինքն ալ կրնայ ընել . մըջիւններուն ունեցած համբերութեանը չափ համբերութիւն հարկաւոր չէ . բայց քիչ մարդ կայ որ աս բանս ընէ :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Բարոյական դաստիարակութեան մը եղած սխալմաններուն վրայ, և թէ ինչ կերպով անոնց առաջը առնելու է :

Ա.

ՇԱՏ իմաստութեամբ կ'ըսէ Ար փիլիսոփան . «Տղայ մը լեզու ելլելուն

» պէս՝ քովը պէտք է խելացի զգուշաւոր ու դիտող մարդ մը գտնուի, որ վրան աղէկ աչք ունենայ, ամէն տեսակ ախտերէ զինքը զգուշացնէ, մանաւանդ չար ընկերներու կենակցութենէ » :

Տղոց բարոյականը խիստ պզտիկուց շտկել սկսելու է . աս բանս սուրբ գիրքը ծանր խօսքերով կ'ապրսպրէ, ու ծնողաց վրայ պարտք կը դնէ որ ամենեւին աս կողմանէ անհոգութիւն չընեն :

Բարոյական դաստիարակութեան մէջի մեծամեծ սխալմանները շատ գէշ հետեանքներ կ'առնենան՝ թէ մասնաւոր անձանց և թէ բոլոր ընկերութեան համար . աս սխալմաններուն դիմացը առնելու ինչ հնարքներ որ կան՝ հոս համառօտ կերպով մը յիշենք :

Ա . Չար օրինակ : — Չար օրինակը ամէն բանէ աւելի տղոց բարքը կ'աւրէ . անոր համար ծնողք և վարժապետք ամենայն կերպով պիտի ջանան որ տղոց բարի օրինակ տան : Ֆենելոն որ և իցէ օրինակին այնչափ ազդու ըլլալուն բնական պատճառը աս բանս է կ'ըսէ . «Տղաք զանազան բաներու վրայ դեռ որոշ ու պայծառ գաղափար և բաւական հմտութի չունենալով, ինչ որ տեսնեն՝ մէկէն անոր կը հետեւին, ու մտքերնին կը պահեն » :

Ուստի խիստ հարկաւոր է որ տղոց քով եղողները առաքինի ու ընտիր մարդիկ ըլլան, մանաւանդ ծնողք, ու ջանան միշտ բարի օրինակ տալու . և թէ որ մէկը բնութեամբ առաքինի չէ, գոնէ նայի որ տղոց առջև առաքինի երևնայ . որպէս զի իրեն չար օրինակովը ուրիշներուն կորստեանը պատճառ ու պատասխանատու չըլլայ :

Յորենաղ լատին բանաստեղծն ալ կ'ըսէ, թէ «Տղոց առջևը շատ պատկառանքով կենալու է » . աս խօսքը կրնանք ասանկ իմանալ՝ թէ տղայ մը քանի որ դեռ պզտիկ է՝ ինչ և իցէ